

ԹԻԻ 8

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ 1913-14 ՇՐՋԱՆԻ
ԵՐԵՍՓՈՆԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵՆԷՆ ԵՏՔԸ

ՆԻՍՏ. Ը.

5 Յուլիս 1913



Տպագրութիւն Ռ. ՍՍ.ԿԱՆՈՆ
ՀԱՂԱԹԻԱ, Գուրշուկու Խան, Թիւ 7, Կ. ՊՕԼԻՍ

1914

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ
(Ա. վիճակ)

1. Տ. Եղիշէ Արքեպ. Դուրեան
2. Տ. Վահրամ Սանկունի
3. Տ. Զարմալը քհնյ. Կէզիւրեան
4. Տ. Տրդատ Բհնյ. Պօյանեան

(Բ. վիճակ)

5. Տ. Մաղաքիա Արքեպ. Օրմանեան
6. Տ. Գրիգորիս Ծ. Վ. Պալազեան
7. Տ. Երուանդ Ծ. Վ. Բէրտանեան
7. Տ. Սմբատ Ծ. Վ. Գազազեան

(Գ. վիճակ)

9. Տ. Հմայեակ Արքեպ. Դիմաքսեան
10. Տ. Մաղաքիա Եպիս. Տէրունեան
11. Տ. Միքայէլ քհնյ. Աշեան
- 12.

(Դ. վիճակ)

13. Տ. Արիստակէս Ա. Բահ. Զիգմէեան
14. Տ. Խորէն Յարութիւնեան
15. Տ. Յուսիկ Բաջունի
16. Տ. Տաճատ Փաշեան

(Ե. վիճակ)

17. Տ. Եզնիկ Ծ. Վ. Պապեան
18. Տ. Հմայեակ Բահ. Էքսէրեան
19. Տ. Բաթող թագմեան
20. Տ. Արէլ Երէցեան

ԱՇԽԱՐՀԱԿԱՆՔ

(Ա. վիճակ)

Ելուպ Ս. Եղիս

21. Օննիկ էֆ. Մինասեան

Խազգիւլ

22. Պետրոս Նալաճեան
23. Սմբատ Բեաթիպեան
24. Պետրոս Խօրասանեան

Մագրի-գիւլ

25. Երուանդ էֆ. Պէյազեան
26. Թագուր Սրբեան
27. Տօթ. Լ. Մալխասեան
28. Յակոբ Պօյանեան
29. Յովհաննէս Խազուլեան
30. Սարգիս Պէրէեան
- 31.

Պէօլիֆէրէ

32. Զբալ Սպարապետ
33. Յովսէփ Գազազեան

Սան-Սքէման

34. Դէորդ էֆ. Ասլանեան

Օրթաքիւլ

35. Խաչիկ էֆ. Սըվաճեան
36. Տօթ. Ստեփան Թէրզեան

(Բ. վիճակ)

Բերա-Գասրմ-փուշա

37. Արամ էֆ. Հալաճեան
38. Մանուկ Սալաճեան
39. Յակոբ Էսաեան
40. Ստեփան Դարաճեան
41. Տօթ. Վահրամ Թորգոմեան
42. Տիրան Կիւմիւշկէրտան
- 43.
- 44.
- 45.

Գարբալ-զնալը

46. Ա. էֆ. Վաւաճեան

Գուրուշէմէ

- 47.

Պէօլիքաւ

48. Միհրդատ էֆ. Հալկազն

Ֆէրիզիւլ

49. Եղուարդ էֆ. Գարակէօզեան
50. Հրանտ Սաստուր
51. Մարկոս Նաթանեան
52. Յակոբ Պահրի

(Գ. վիճակ)

Գասիզիւլ

53. Անտոն էֆ. Թարազ
54. Աղասի Սալաճեան
55. Եղուարդ Շիրինեան
56. Ներսէս Օհանեան
57. Սարգիս Էսմէրեան
- 58.
- 59.

Եէնի-Գարու

60. Պենոն էֆ. Տէյիրմէնեան
61. Վահան Փափազեան

Պալաթ

62. Տօթ. Կարապետ էֆ. Եաղուպեան
63. Յարութիւն Մոստիչեան
- 64.
- 65.

Սկիւտար Եէնի ժահալլէ

66. Թորգոմ էֆ. Պօյանեան
67. Հմայեակ Խոսրովեան
68. Վահան Սուրէճեան

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1913—1914 ՆԱՏԱՇՐՋԱՆԻ

ՆԻՍՏ Ը.

5 ՅՈՒԼԻՍ 1913

Դ Ռ Ն Փ Ա Կ

ՆԱԽԱԳԱՀ.— ԱՄԵՆ. Տ. ՄԱՂԱՔԻՍ. ԱՐՔԵՊ. ՕՐՄԱՆԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ.— ՏՕՔԹ. ՏԱՂԱԽԱՐԵԱՆ ԷՖ.

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Տեղեկատուութիւն Ազգային Վարչութեան ի մասին հայաբնակ նահանգաց:

ԲԱՑՈՒՄ ԺՈՂՈՎՈՅ

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Նիստը տեղի ունեցաւ Ղալաթիոյ Խորհրդարանի մէջ և ժամը 3.15ին, ատենը բացուեցաւ ի ներկայութեան 47 երեսփոխաններու, որոնց թիւը յետոյ յանգեցաւ 73ի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ատենը բացուած է ի ներկայութեան 47 երեսփոխանաց: Աբրահամ էֆ. Տ. Յակոբեան ճամբորդութեամբ մէկ ամսուան համար բացակայ գտնուիլը կ'իմացնէ: Այժմէն պարտք կը համարիմ գիւնին կողմէ յայտարարել որ լրագրաց ներկայացուցիչները զգուշ ըլլան իրենց հրա-

աստիճան տագնապալի վիճակը հարկադրած է մեզ երկու երեք օրէ մեր օրական աշխատութիւնները բոլորովին երեսի վրայ թողուլ և թափառել պաշտօնավայրէ պաշտօնավայր ստոյգ տեղեկութիւն մը առնելու համար մեր հայրենիքը, Ռոստոմ, կատարուած սոսկալի ջարդ ու թալանի նկատմամբ: Ականատես վկաներ երկրորդ և ալ աւելի սոսկալի Ատանա մը կը նկարագրեն. փողոց և դաշտերու մէջ անթաղ փռուած դիակներ հարիւրաւոր անմեղներու, որոնք անհիւ վեհանձնութեամբ պաշտպանութեան ձեռք կարկառեցին բոլոր այն Օսմանցիներու, որ պուլկար բանակին Ռոստոմ արշաւած ժամանակ ահ ու սարսափի մատնուած գահավիժօրէն կը փախչէին անպաշտպան թողլով իրենց կիներն ու զաւակները:

Այսօրուան թերթերու տուած տեղեկութեանց համաձայն, Օսմանեան Գործակալութիւնը բոլորովին կ'ուրանայ կատարուած սոսկալի իրողութիւնները, որով ի դերեւ կը հանէ մեր բոլոր յոյսն ու աշխատութիւնը ստոյգ տեղեկութիւն մը տունելու մասին: Հետեւաբար, բոլորովին յօսակաւոր, մէկ բան միայն կը մնայ մեզ ընել, այն է դիմել Ազգ. Երեսփ. Պատկ. Ժողովոյդ, և խնդրել որ անմիջական միջոցներ ձեռք առնէ ըստ կարելւոյն փութով ստոյգ տեղեկութիւն մը առնելու համար արդէն կատարուածի մասին, և սահմանափակելու համար այս եղևոնական ոճիրը ուր որ է այժմ, թող չտալով ուր տարածուի աւելի հեռու ծովեզերքէն որ խեղճ ժողովուրդը ահ ու սարսափի մատնուած՝ բոլորովին անպաշտպան ու գիտէ ինչ ահաւելի վայրկեաններ կ'անցնէ:

Զարդուած հայրենակիցներու ուրուականները մղձաւանջներու նման կը ծանրանան մեր վրայ, և անոնց արիւնը արդարութիւն կը պահանջէ, զոր անշուշտ Պատկ. Ժողովոյդ պիտի ջանայ ձեռք ձգել ամէն գնով. հակառակ պարագային պատրաստ ենք մենք մեր սեպհական միջոցներով մեր դատը պաշտպանել, անշուշտ օրինաւոր սահմանի մէջ:

Մատչելով ի համարոյր Ս. Աջոյդ Ամեն. Սրբազնութեան Պոլսեցեակ Ռոստոմցիներ Սոսրագրութիւն

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ԱՏՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենական գործողութիւնները լրացած են, այժմ կ'անցնին օրակարգի որուն միակ և զլիսա որ խնդիրը Հայաստանի մերազնեից ներկայ վիճակի մասին վարչութեան տալիք բացատրութիւններն են, ուստի խօսքը վարչութեանն է:

ԳԱՐԱԵԱՆ ԷՖ. — Մենք այսօր գլխաւորաբար դիտաւորութիւն ունինք Ռոստոմի ղէպերուն մասին տեղեկութիւն տալ, ուստի նախ այդ մասին պիտի խօսիմ, վերջը պիտի դադար մը կուտանք և կ'անցնինք բուն խնդրին:

ԱՏՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այդ մասին ձեր տալիք բացատրութեան կը սպասուէր արդէն:

ԳԱՐԱԵԱՆ ԷՖ. — Անցեալ չորեքշաբթի Ռոստոմի առաջնորդ Ասլանեան վրդ. ներկայացաւ Սառնժոզովոյ և բերանացի խիստ կարեւոր տեղեկութիւններ տուաւ այն շարժումներու մասին որոնք կը պատահէին:

ԶԱՅՆԵՐ. — Վարչութիւնը ո՞ր օրը տեղեկութիւն ունէր:

ԳԱՐԱԵԱՆ ԷՖ. — Անցեալ չորեքշաբթիէն մեզի տեղեկութիւն տրուեցաւ թէ ի հարկին երբ որ Ռոստոմի Պուլկարներու կողմէ պարպուի կրնային ղէպեր պատահիլ Հայերու վրայ որովհետեւ էնթրիկներ կը լարուէին, ինչպէս մասնաւոր կերպով ալ տեղեկութիւն տրուեցաւ մեզ: Ասլանեան վրդ. ղէպ ի Սօփիա իր ճամբորդութեան մասին ալ ծանօթութիւններ տուաւ, տեսանք որ առաջնորդին ըսածները լուրջ հանգամանք մը ունէին. ուստի որպէս զի ձեռքերնիս գրաւոր փաստեր ունենանք, հրաւիրեցինք զինքը որ կարելի եղածին չափ փաստացի, անուններով գրաւոր բան մը տայ, որպէս զի մենք ալ մեր զիմումները ընենք: Շաբաթ օր թէպէտեւ տուն էր սակայն Պատրիարքարանին մէջ գումարուեցանք և այդ օրը վարդապետը կրցաւ բերել իրմէ պահանջուած փաստացի գրու-

թիւնը. մենք ալ ըստ այնմ որոշեցինք մասամբ գրաւոր և մասամբ բերանացի կերպով դիմում կատարել կառավարութեան: Կիրակի լրագրերէն երբ տեղեկացանք թէ այդ քաղաքին Պուլկարներու կողմէ պարպուած չափ աւելի շուտ պիտի ըլլայ, իսկոյն երկուշաբթի առաւօտ կարգադրեցինք որ դիմում մը ընենք. ես Դուռը պիտի սպասէի և Ս. Պատրիարքը կամ Փոխանորդը գային զիս պիտի գտնէին: Պէտք է աւելցնեմ հոս որ մեր դիմումը քիչ մը փափուկ հանգամանք ունէր, երբ կառավարութեան պիտի երթայինք ըսելու որ ձեր զինուորները Ռոստոմի պիտի գրաւեն կրնայ ըլլալ որ ղէպեր պատահին, ինչորենք առաջը առէք. Հետեւաբար նախ Ատլիէ նազըրին դիմում եղաւ իմ կողմէ այս նպատակով և փափկութեամբ խօսուեցաւ. նազըրը պատասխանեց. — Մենք ալ զիտենք որ կրնան այդպիսի ղէպեր պատահիլ, բանակին ընկերացող պաշտպաններու կողմէ, ուստի ամենախիստ հրամանները տուած էինք, որպէս զի Օսմ. զինուորները էնոս-Միտեա սահմանագիծը մտած առենին օրինակելի վարմունք մը ունենան. Այս պատահանին վրայ աւելցնելով թէ այդպիսի ղէպերու պատահումին տեսն Օսմ. Պետութեան վարկը պիտի կտորի, հարցուցի թէ արդեօք այս մասին ուղղակի վարչապետին դիմենք թէ Տախիլիէ նազըրին: Նախարարին յանձնարարութեան վրայ դիմեցինք Տախիլիէ նազըրին, սակայն հոն չգտանք...

Ե. ՇԻՐԻՆԵԱՆ ԷՖ. — Որովհետեւ գացիք և երբ:

Ս. ԳԱՐԱԵԱՆ ԷՖ. — Փոխանորդին հետ, Ս. Պատրիարքը հիւանդ ըլլալով երբ տեսանք որ դիմումը յետաձգելու հանգամանք չունի, իսկոյն Սատրապամին գացինք. նոյն պահուն Ն. Բարձրութեան քով կը գտնուէր նաև Պատերազմական նախարարի փոխանորդ Մահ. մուտ փաշա, սիրալիք ընդունելութիւն մը ըրաւ. ինչիւրը պարզեցի վարչապետին և յարմար ձեւով մը ղգացուցի թէ բանակին վարկը պիտի կտորի եթէ երբեք իր մուտքին տեսն դժբաղդութիւններ պատահին: Պատրիարքարանը աւելցուցի ստոյգ տեղեկութիւն

ունի որ Հայերը Պուլկար տիրապետութեան որով՝ ունէ գողութիւն ըրած չեն վրէժիւնդարական ձեւի տակ. ոճիր չեն գործած և երբ յարձակում գործի ունէ քրիստոնեայի վրայ, իբրեւ այդ պիտի հասկցուի: Այս խօսքերու վրայ վարչապետը ձէնթմէն և նպարզ ձեւով մը ըսաւ. «Ձեմ հասկնար թէ, ինչպէս կըլլայ այդ տեսակ բան, Հայը ինչ գործ ունի, ամենեւին այսպիսի բան մը երեսակայելի չէ՝. մինչ միւս կողմէ Սէրասքէր վէջիլի Մահ. մուտ փաշա իր կարգին ըսաւ թէ «Կարելի չտեսներ ունէ դէպքի ծագումը, որովհետեւ աւելցուց, մեր բանակին մէջ Հայերը ամենէն աւելի զոհողութիւն ընողները և համբաւ հանողները եղան. վստահ եղէք որ ամենէն խիստ հրամանները պիտի տանք»: Այս խօսքերուն վրայ համոզուած Սատրապամին և Մահ. մուտ փաշայի յայտարարութեանց անկեղծութեանը, մեկնեցանք Դուռնէն. Երկուշաբթի իրիկուընէ հիւանդացայ. երեքշաբթի չկրցայ իջնել, Նոյն օրը Զօհրապ, վարդգէս էֆ. ներ Սմբատ վոդ. և Տօթթ. Փաշաեանն ու գործակատարը կը դիմեն...

Վ. ԹԷՔԷՆԵԱՆ ԷՖ. — Լուր մը ստանալէ յետոյ թէ ի նախատեսութիւն:

Ս. ԳԱՐԱԵԱՆ ԷՖ. — Շշուկներ ելած էին թէ արդէն բաներ մը պատահեցին և այն օրը կարգ մը բախտախնդիր անձեր կը մեկնէին և անոնց գլուխը անցեր է Շէրիֆ էֆ.: Այդ դիմումը վերջին ծայր օգտակար եղեր է, որովհետեւ նոյն օրը արգիլուեր է անոնց մեկնումը. չորեքշաբթի մեկներ են թէև, բայց գացած խիստ հրամաններուն վրայ գառնուկի պէս մտեր են քաղաք: Երեքշաբթի Միթէ. սարքի փաշային հրաման կը տրուի որ մեկնի, իրիկունը Պատր. Փոխանորդն ու Միհրդատ էֆ. Հայկազն մեկնեցան պէտք եղած յանձնարարականներով և յետոյ լսեցինք որ արդէն ցամաք ելած են: Զորեքշաբթի առաւօտ Սառն ժողովին մէջ որոշուեցաւ հանդիսաւոր և ամենախիստ դիմում մը ընել այս անգամ ընկերակցութեամբ Ս. Պատրիարքին, եթէ նոյնիսկ երեսը կապած ըլլայ...

Ե. ՇԻՐԻՆՆԱՆ ԷՖ. — Ակումները քաշել տուեր է ...

Ս. ԳԱՐԱՆԱՆ ԷՖ. — Արդէն եւ ալ հիւանդ էի, ինչ որ է, մամը մէկուկէս երկու քին միջոցները Ս. Պատրիարքը եկաւ, որով Ն. Սրբազնութիւնը եւ Վահան Վրդ. և գործակատարը փութացինք Բ. Դուռ և ներկայացանք Սատրապմին ու վճարական կերպով յայտարարեցինք թէ դէպքի իսկութեան մասին մինչեւ որ գոհացուցիչ պատասխան մը չստանանք պիտի չսկսինք, ասկէ զատ պահանջեցինք որ քօրթիսօ մը զրկեն չոտ ան ղեկութիւն կարենալ ստանալու համար, քանի որ հեռագրական հաղորդակցութիւն չկար: Վարչապետը վերջին ծայր յուզուեցաւ, ցաւ յայտնելով եղածին համար և պատասխանեց թէ ինչ հրաման որ կարելի է տուած է արդէն, սակայն ոնէ պատասխան չէ հասած: Կրկնեցինք թէ պիտի չմտնինք մինչեւ որ գոհացուցիչ պատասխան մը չստանանք, որովհետեւ Պատրիարքարանը տեսակ մը յարձակումի ենթարկուած էր: Ուրեմն կրնաք սպասել ըսաւ Վարչապետը և մենք քաշուեցանք սպասման սրահը Միւս կողմէ Ատլիէի նախարարէն իմացանք որ ոճրագործութեան զրոյցները յուսահատութեան մատնած են զինք և սրտին վրայ քար մը ծանրացած է: Երկու ժամ վերջը նորէն գացինք Վարչապետին և հարցուցինք թէ արդեօք պատասխանին այսչափ ուշանալը պատճառ մըն է որ «գարա խապէր» մը պիտի առնենք: Սատրապմը վստահացուց թէ արդէն «թօրփիտօ»ն ճամբայ ելած է քաղաքային քննիչով մը և «գացէք դուք հանգստացէք ըսաւ, եւ կ'ապաստուցնեմ որ պատասխանը հասածին պէս շոյնիսկ կէս գիշերին, իսկոյն պիտի հաղորդուի Ս. Պատրիարքին: Հետեւալ օրը, այսինքն երէկ մեզի պատասխան տրուեցաւ թէ Պուլկար ծառայութեան մէջ գտնուող 6 Հայ ժամտարմաներ ուրիշներու հետ քաղաքը գրաւելու եկող Օսմ. զինուորներուն դիմագրած ըլլալով, սպաննուած են:

Վ. ԹԵՔԷՆԱՆ ԷՖ. — Ձեր կրկին դիմումին վրայ:

ԳԱՐԱՆԱՆ ԷՖ. — Ոչ, իրենց կողմէ լուր ղրկուեցաւ մեզի. արդէն այդ օրերուն Պատրիարքարանի կողմէ կերթային կուգային: Դէպքին վրայ այս տեղեկութիւնը մեզի զրկուելէ ետք իմացանք որ Պատրիարքարանին հասցէին կարգ մը անպատշաճ խօսքեր եղեր են թէ ինչի ր չափազանցուած է, վիվիէի տուած ենք ևն. ևն. դիմեցի Ատլիէ նազըրին և ցաւ յայտնեցի եղած այս խօսքերուն համար, սակայն նախարարը հերքեց կառավարութեան վերաբերուած այդ խօսքերը, ետքէն տեղեկացանք որ Պատրիարքարանի դէմ խօսողն է Պոսոյ զինուորական կառավարիչ Ճէ-ձալ պէյ միայն: Ահաւասիկ պաշտօնական դիմումներուն հանգամանքը: Այս առթիւ հմուռամբ ըսելու որ ուրիշ դիմումներ եղած են, երբ դեպքն անտարբերութեամբ դէպքը կը լսեն աղնուաբար զրահաւորներ կը զրկեն, միայն քիչ մը ուշ տեղեկացած են:

(Դարաւան էֆ. կարգաց Պատր. Փոխանորդին կողմէ Վարչութեան եկած նամակները) որոնցմով տեղեկութիւններ կը հաղորդուէր Ռօտտսթոյի վիճակի մասին:

Ս. ԳԱՐԱՆԱՆ ԷՖ. — Քանի մը խօսք ալ պիտի ընեմ Յոյներու դերին վրայ. Սալանեան Վրդ. ի մեզի բրած տեղեկատուութեան համաձայն ասոնք սկիզբէն, երբ Պուլկարները քաղաք մտեր են, Թուրքին մահացու թըշնամի Պուլկարներուն համակիր ցոյց տուեր են ինքզինքնին, մինչ Հայերը Թրքասէր, այնպէս որ շոյնիսկ երկու Յոյներու զրգումով քիչ մնացեր է նշանաւոր Հայեր պիտի կախուին եղեր, սակայն տեղացի Պուլկարներուն տուած վկայութեան շնորհիւ աղատեր են: Իսկ երբ Թուրքերը այս անգամ մտեր են քաղաք, Յոյները դարձեր են վերջին ծայր թրքասէր եղեր են և սկսեր են մատնութիւններու: Հայերը Պուլկար տիրապետութեան օրով շատ լաւ վարմունք մը ունեցեր են, թէպէտե քիչ մը աւելի եռանդով վարուեր են, այսու հանգերձ Պուլկարներու Ռօտտսթօ գտնուած ատեն Հայերը մեծ բարիքներ ըրին տեղւոյն Իսլամներուն, և այս մասին արդէն ցանկ մը պիտի ներկայացնենք կառավարութեան: Ինչպէս ըսի Յոյները թշնամաներ են

Հայերը Թրքաց աչքին, բայց չեն մտածեր որ Իսլամին համար բոլոր քրիստոնեաները հաւասար են, հետեւաբար ջարդուած են նոյն պէս Յոյներ, անոնց կորուստները Հայերէն շատ տուելի է, որովհետեւ դաշտին մէջ գիւղերը Յոյն են և հոն է որ ամէնէն աւելի դէպք պատահած է: Գիտէք որ Խասգիւղի կոտորածին ատենն ալ Հրեաները միևնոյն դերը կատարեցին, բայց ասոնք մեզի համար կարևորութիւն ունենալիք բաներ չեն: որովհետեւ չենք կրնար ըսել որ եթէ ասոնք տեղի չունենային, այս բաները պիտի չըլլային: Ամէն պարագայի մէջ ուրիշ առիթով այս բաները կրնանք յիշեցնել իրենց, այսպիսի դործերով թշնամութիւններ արծարծելը ես յարմար չեմ տեսներ: Հիմա մեզի ամէնէն աւելի մտածութիւն պատճառողն է Մալկարան, Հայրապօլը եւ Զօրլուն, բայց մանաւանդ Մալկարան, դժբաղտաբար այս մասին մեր տեղեկութիւնները թերի են: Վաղը առտու նոր դիմում պիտի ընենք: Մեզի հասած նամակներէն այս եզրակացութիւնը կարելի է հանել թէ այդ խուժանը և զինուորները կանխապատրաստուած էին այդ ջարդը ընելու և թէ այս տեղէն արդէն միտքերնին դրած էին այս յարձակումը գործելու, որովհետեւ այն զրոյցները որ իբր թէ հայ ժամտարմանները դիմագրած են, սխալ է բացարձակապէս, որովհետեւ այդպիսի պարագայի մը գոնէ թուրք զինուորներուն մէկ երկուքը պիտի վիրաւորուէին, մինչդեռ ադտեսակ բան մը չլսեցինք: Ընդհակառակը տեղւոյն Հայերը շատ մեծ իմաստութեամբ վարուած են և բնաւ չէնք չեն պարպած ըլլայ Ս. Խաչ թաղէն, ըլլայ Ս. Թագաւորէն, եթէ Հայերը փոխադարձէին յետինն չարքան զառաջինն պիտի ըլլար: Ուրիշ կարեւոր կէտ մը կայ, զոր պէտք է լրջութեամբ ի նկատի ունենանք. այսպիսի պարագաներու ատեն հինէն սովորութիւն մ'է Թուրք իշխանութեան և այդ ալ այն է որ «Հայերը պատճառ տուին», «Հայերը զէնք պահած են» սին առարկութիւններով Հայեր բանտարկել և յետոյ ալ մահուան դատապարտել ...:

Ե. ՇԻՐԻՆՆԱՆ ԷՖ. — Արդէն 110 հոգի բանտարկած են:

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ ԷՖ. — Արձակուած են:

Ս. ԳԱՐԱՆԱՆ ԷՖ. — Վաղն առտու Մալկարայի մասին դիմում պիտի կատարենք, այդ մասին ալ տեղեկութիւններ կուտանք: Զմուռնամ տւելցնել, Ռօտտսթոյի անգլիական հիւպատոսը մարդատիրական ջանքեր ցոյց տուած ըլլալուն համար՝ շնորհակալութիւն պիտի յայտնուի Պատրիարքարանին կողմէ:

(Այս միջոցին պահ մը դադար տրուեցաւ):

Դադարէն յետոյ՝

Ն. ՕՀՆՆԱՆ ԷՖ. — Այսօր ցաւալի իրողութեան մը առջեւ կը գտնուինք, ամբողջ ազգը մատանջութեան մէջ է, սակայն քանի մը քննադատելի կէտեր կան Վարչութեան թերի կողմերը ճշտորոշող, Անցեալ երեքշաբթի օր առաջնորդը կը դիմէ Ս. Պատրիարքին և մատնանիշ կ'ընէ ամինապատանգաւ, որ վիճակ մը, ըսելով որ երկու օրէն Օսմ. բանակը պիտի մտնէ Ռօտտսթօ, Հետեւեալ առտու Լալանեան վրդ. Խառն Ժողովին ալ կը ներկայանայ և նոյն բաները կ'ըսէ աւելի մանրամասնօրէն և կ'իմացնէ վտանգի մը մօտալուտ ըլլալը. անցեալ երեքշաբթիէն մինչեւ չարաթ գրաւուր տեղեկագիր մը կը սրբուի, այսպէսով թանկագին մէկ քանի օրեր պարապր կ'անցնին երբ ամէն տեսակ դիմումներ կրնային կատարուիլ թէ՛ դեպքնատանց և թէ կառավարութեան մօտ Այս երկու շաբթի 200 չեքաներ Պանտրմայէն կուգան հոս Ռօտտսթօ երթալու նպատակով, երեքշաբթի դիմում կ'ընենք և չորեքշաբթի «Իմոճըն» պահակաւաւը դէպքին վայրը կը փութայ, իր մէջ ունենալով Ս. Ութթօլը: Եկած լուրերուն վրայ Ռօտտսթոյները քարափը, սըրճարանները չողենաւի կը սպասեն իրիկունը: Իսկ երբ երեքշաբթի առաւօտ Ռօտտսթոյները դէպքերը գուժելու նպատակով Ս. Պատրիարքին կը դիմեն, հարկ եղած դիմումներով դէպքին ծաւալումը արգելել տալու կանխահոգութեամբ, Ն. Սրբազնութիւնը փոխանակ զանոնք մխիթարելու, ինչ կ'ուզէք որ պատասխանէ — Հարկաւ դուք ալ բան մը

ըրիք որ բռնեցին ձեզ ջարդեցին կ'ըսէ։ Ու այս պատասխանին վրայ Ռօտտօթոյնները սրտաբեկ ետ կը դառնան։ Ես մէկ րան կը տեսնեմ. ես թունդ պահպանողական անձ մըն եմ, սակայն Ուզգ. Ժողովը որոշեց է թէ չէ, պէտք է անձնապաշտպանութեան դիմենք...

Մ. ԿԻՒՐՃԵԱՆ ԷՖ.— Սրիկաներու դէմ այո՛, բայց կանոնաւոր բանակին դէմ ի՞նչ պէտք է ընել։

Տ. ՎԱՀՐԱՄ ԱՐՔ.— Վնասակար են այս խօսքերը։

ՆԵՐՍԷՍ ՕՀԱՆԵԱՆ.— Այո՛, բայց հիմա անհրաժեշտ է ինքնապաշտպանութիւնը։

ԼԵՒՈՆ ՍԵՂՈՍԵԱՆ ԷՖ.— Կը չնորհաւորեմ։

Ն. ՕՀԱՆԵԱՆ ԷՖ.— Ուզգը հանդիսաւորապէս պէտք է արտայայտուի. պէտք է կրօնականներէ և աշխարհականներէ բաղկացած 12 հոգիանոց պատուիրակութիւն մը երթայ Բ. Դրան և ամբողջ դեպքանաւորներուն բողոք բառնայ։

ՊԱՐԳԵՒ ՓԱՓԱԶԵԱՆ ԷՖ.— Ես առանց ծանրանալու եղածին չրայ, անմիջապէս կ'առաջարկեմ դարմանը խորհիլ. կարծես Ուզգ. Ժողովը մեռելաթաղի պաշտօնը ունի։ Ես առանց այլևայլի կ'առաջարկեմ դիմել կառավարութեան և պահանջել որ Պատրիարքարանի պատուիրակութեան ղրկած սա երեք տեղեկագիրները հրատարակուին Հայ թերթերու մէջ, քանի որ տեղեկացանք թէ կառավարութիւնը արգելած է մամուլին ու է բան գրել Ռօտտօթոյի դէպքերու մասին, և եթէ կառավարութիւնը գոհացում չայայ մեզի, յարաբերութիւնները խզել անոր հետ և դիմելով դեպքանաւորներուն պարզել ամէն ինչ ըսելով թէ վստահութիւն չունինք կառավարութեան վրայ։ Ամէնէն կտրուկը այս է. ողբերը օգուտ չեն ընել։

Յ. ՃԱՆԿԻՒԼԵԱՆ ԷՖ.— Կառավարութիւնը

ինչու համար չարտօնեք որ դէպքերը հրատարակուին, եթէ երբէք ծրագրուած. կանխապատրաստուած չէր ջարդը։ Ես այն համոզումը ունիմ թէ պատրաստուած բան մըն էր եղածը. Ռօտտօթօ երեք ժամուան հեռաւորութիւն ունի Պոլսէն և ճիշտ չէ թէ դէպքէն տեղեկութիւն չունի կառավարութիւնը. եթէ զինուորը կանխապէս հրահանգ չունենայ ի՞նչ պէս կը ջարդէ։ Ես ալ իմ կարգիս կը նախընտրեմ վեց մեծ տէրութեանց դեսպաններուն դիմում կատարել, որովհետեւ այն վախը ունիմ թէ Ռօտտօթոյի մէջ ալ, ինչպէս ըրին Ատանա, ջարդելէ ետք Հայեր կախաղանի պիտի դատապարտեն։

Ս. ԳԱՐԱՆԵԱՆ ԷՖ.— Չեմ կրնար հաւատալ թէ կառավարութիւնը տեղեկութիւն չունի դէպքէն։

ՕՆՆԻԿ ՄԻՆԱՍԵԱՆ ԷՖ.— Ես կ'ուզեմ հասկնալ թէ Ասլանեան վրդ. Պոլիս գալէ յետոյ ստոյգ է որ Ս. Պատրիարք Հօր ներկայացած և Ռօտտօթոյի սպառնացող վտանգը մատնանիչ ըրած է. պէտք է գիտնանք թէ իր այս յայտարարութիւնը վարչութեան նիստին մէջ ըրած է թէ դուրսը. Ուրիշ պարագայ կայ ի՞նչու առաջնորդ Ասլանեան վրդ. իր պաշտօնատեղին չէ մեկնած. կ'առաջարկեմ որ վարչութիւնը իր ցաւը յայտնէ ասոր համար, ինք պարտաւոր էր ինչ ճամբով և միջոցով որ ըլլար. իրեն հովիւ քաջ կանգնէր իր ժողովուրդին գլուխը, իսկ գալով մեր ընկիւղին պէտք է խոհեմութեամբ գործենք։

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ ԷՖ.— Պարտաւոր կը զգամ յայտնելու հոս թէ Ասլանեան վրդ. ինձ առաջարկեց որ երթայ սակայն լսած ըլլալով Ռօտտօթոյններէ որ տեղական իսլամ ժողովուրդը զրգուում է առաջնորդին դէմ, մենք խնդրեցինք որ հոս մնայ։

Կ. ՓԱՇԱՆԵԱՆ ԷՖ.— Վերստին պիտի պատասխանեմ՝ առաջնորդը ժողովին ներկայանալէ առաջ արդէն Ս. Պատրիարքին հետ տեսակցել է, երբ ժողովին ներկայացաւ ըսաւ

որ Օսմ. դօրքը եթէ Ռօտտօթօ մտնէ, այդ տեղէն երկիւղ չկայ, բայց Մալկարայէն քիչ մը կը կասկածինք։ Միայն թէ Ռօտտօթոյի մէջ էնթրիկներ կը լարուին, այդ պատճառով պէտք է աշխատինք սրայէսզի ապահովութիւնը հաստատուի և ջարդի սկզբնաւորութիւն տեղի հռենայ. միևնոյն ատեն ինք պատմեց իր ունեցած տեսակցութիւնը ի Պուլկարիս և հաւատեց թէ Ջարը և Դաշլիճը ապահոված են, որպէս զի երբ Պուլկար զինուորները քաշուին, ունէ դէպք տեղի չունենայ։ Այնպէս որ վարչութիւնը այդ նախնական քայլերը ընելէ յետոյ, մասամբ ապահովուած էր թէ ունէ ջարդ տեղի պիտի չունենայ ու այս պարագային մէջ բաւական մեծ անակնկալ մը եղաւ իրեն, պատահած դէպքերը։

Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ ԷՖ.— Ծիչդ է թէ առաջնորդը ըսաւ որ Ռօտտօթոյի մասին կասկած չունի։

Ս. ԳԱՐԱՆԵԱՆ ԷՖ.— Առաջնորդը երբ չորեքշաբթի առտու ներկայացաւ, իրմէ ինչ պէս ըսի, գրաւոր վկայութիւն չմը ուզեցինք, ըստ այնմ կատարելու համար մեր դիմումները, որովհետեւ կ'ամբաստանէինք արդէն թէ չեղած բաները եղած կը ներկայացնենք. մանաւանդ այս տեսակ ծանր պարագաներու առթիւ կառավարութեան դիմում կարենալ կատարելու համար անպատճառ գրաւոր վկայութեան, փաստաթղթերու պէտք ունենինք. սակայն մենք չըսինք վարչապետին որ այդ գիրը չարթթէն առաջ չընէք. այդ դէպքերը չպատահած ոչ մէկ անհատ ընէ. այդ դէպքերը ըսել թէ անոնք բնականաբար չէր կրնար ըսել թէ անոնք չուտով ի գործ պիտի դրուէին. Ծիչտ կերակի օրը Պուլկարները հեռացեր են քաղաքէն այնպիսի արագութեամբ մը որ բնականաբար կարելի չէր նախատեսել։ Առաջ գիտէինք որ հեռուէն հեռու վտանգ մը կար, մինչ Պուլկարներուն մեկնումէն ետք անմիջական դարկանք ալ վտանգը, այսու հանգեք չէինք ձաւ այդ վտանգը, այսու հանգեք երկրորդ տակաւին դէպքերը չպատահած երթալ դեսպանատունները և ըսել որ մենք ասանկ վախ մը ունինք, ատոր համար կարելի չէ որ ձեր զրահաւորները ղրկէք, քիչ մը իրական կեանքը պէտք էինք նկատի առնել,

դէպքին ծագումէն ետք անգամ ստոյգ բան մը չէինք գիտեր. չէին գիտեր մինչև իսկ Ռօտտօթոյնները, այսինքն մէկ բառով հարցուինք թէ այդ դէպքերուն համար զինքն ըլլալիք թուղթ մը ունինք, «ո՛չ» ըսին։

Ս. ԷՍՄԷՐԵԱՆ ԷՖ.— Թրքական առածը կ'ըսէ. «Էշէյիի տէօյէմէյէն բալանը տէօյէր» ուրիշ բանի չեմ կրնար նմանցնել մեր ըրածը բացի այս առածէն. մեր գործը մինչև վերջը վարչութիւնը քննադատել է. ի՞նչ է ըրեր վարչութիւնը, պարտականութիւնը լիովին կատարել է գիշերը ցերեկին խառնելով։ Վարչութիւնը իրաւունք ունէր գրաւոր վկայութիւն ուղարկու առաջնորդէն։ Պատրիարքարանը պաշտօնական հեռագիրներու և նամակներու վրայ թագրիրներ կը գրէ, մէջ մըն ալ կը տեսնես որ Դատական նախարարութիւնը թէզդէրէով կ'ըսէ թէ օրինակի համար ձեր մատնանշած 25 ոճրագործութիւնները մարդասպանուած 25 չեն, այլ մէկ հատ և այն ալ չէ թիւները 25 չեն, այլ մէկ հատ և այն ալ չէ հաստատուել եղեր. դուք յերիւրանքներ կ'ընէք, ասանկ կ'ընէք նանկ կ'ընէք. ո՞ր վարչութիւնն է որ այսչափ խղճամիտ եղած է, քննադատութիւնն ալ քիչ մը չափ սահման ունի...

Ս. ԳԱՐԱՆԵԱՆ ԷՖ.— Քննադատութիւնը անհրաժեշտ իսկ է. միայն թէ անկեղծ ըլլայ, ազգին օգտին համար եղած ըլլայ, այս կերպով ամէն ոք կը լուսաբանուի։

Ս. ԷՍՄԷՐԵԱՆ ԷՖ.— Փորձառու մարդիկ կ'ըսեն՝ «Դրամ չափիր յաջողութիւն մըն է, իսկ մեծագոյն յաջողութիւնն է զայն պահել գիտնալը»։ Մեզի համար ալ մեծ յաջողութիւն մը պիտի ըլլայ. ունեցածնիս վրայ չտալը, պէտք է գիտնանք որ Թուրքերը միշտ կը ջարդեն, 40 տարի է մէջերնին եմ, Թուրքին հացը ծուռեղին վրայ է. ուղածիդ չափ ծառայէ, 10 մատդ մոմ ըրէ, օր մը եղունգին դպիր կը ջարդէ. յախուռն գործերէ զգուշանալը. ձգնալ վարչութիւնը որ իր հետապնդած ճամբան շարունակէ, Թուրքը կը ջարդէ։ Ուղէկ գիտցէք աս և հետեւաբար հեռապատիւ ըլլանք, թողով որ ազգը վարդները ի-

հենց հետապնդած քաղաքականութեան հետեւին:

Ն. ՕԶԱՆԵԱՆ ԷՅԻ. — Օր մըն ալ կուգայ որ ինք կը ջարդուի:

ԿՈՊԵՌՆԻԿ ԷՅԻ. ԽՍՀՄԱՏՈՒՐԵԱՆ. — Պէտք է շնորհաւորել վարդապետը իր հեռատեսութեանը համար, շնորհաւորել նաեւ Գարեան ԷՖ.Ն.՝ որ գացեր տեղեկութիւն տուեր է: Այսօր թուրք թերթերուն մէջ պաշտօնական զեկոյց մը կայ թէ սպաննողները Հայեր են, պէտք է անմիջապէս կառավարութեան տեղեկացնենք թէ նահատակներու թիւը վեց չէ, այլ 100է աւելի: Վարչութիւնը գոհունակութեան արժանի է որ ձեռքէն եկածը կ'ընէ: Սակայն պէտք է յիշել Ատանայի դէպքը և առանց յապաղելու հարկ եղած դիմումները կատարել, որպէս զի ազգը անակնկալներու առջև չգտնուի:

Ս. ԲԻՒՐԱՏ ԷՅԻ. — Ռօտոսթոյի դէպքը այսօր կատարուած իրողութիւն մըն է. այս պարագաներուն առջեւ չենք կրնար ունէ ուրոշում տալ, հիմակ պատասխանատուութիւնները փնտռելու ատենը չէ, դէպքը տեղի ունեցեր է, ես կը վախնամ որ Ռօտոսթօն սկզբը նաւորութիւն մը եղած ըլլայ, երանի թէ խաբուած ըլլայի և շատ սխալ գաղափար մը յայտնած, թուրքը ամէն անգամ որ զէնքերու յաջողութիւն մը ձեռք կը ձգէ, գէշ է որովհետեւ մեղմով աւելի զբաղելու ետեւէ կ'ըլլայ: Կարեւոր պարագայ մը կայ զոր երբէք մեր ուշադրութենէն պէտք չէ վրիպեցնենք. ես ամէն օր թուրքերէն թերթ կը կարդամ և կը տեսնեմ որ ջարդը թուրքին ընդէ. մտայնութիւնն է, այն օրէն մանաւանդ որ Եւրոպայի դիմում եղաւ բարենորոգումներու մասին, թուրք թերթերը տարբեր լեզու մը սկսան գործածել: Այսօրուան «Իգտամ»-ի մէջ հատուած մը կայ որով կ'ուզէ մեզի հասկցնել թէ կամ ձեռք Հայկական խնդրին մէջ մեզի կը փարիք կամ չենէ... գացէք գլուխնդ հազար քարի զարկէք: Ասիկա թուրքին հոգեբանութիւնն է, պէտք է հասկցնենք իրենց թէ Հայկական խնդիրը զեկավարողն է Վեհ. Կաթողիկոսը

որ երբէք մեր Պատրիարքարանէն կախեալ չէ, եւ կը կրկնեմ դարձեալ որ թողունք այս խնդիրը Վեհ. Կաթողիկոսին և մենք ընթացիկ խնդիրներով զբաղինք:

Հ. ԱՐԱՄԵԱՆՑ ԷՅԻ. — Ես կ'առաջարկեմ այս մասին բացուած վիճաբանութիւնը բաւական համարիլ այն նկատուածով որ ժողովը իր օրակարգին պիտի անցնի և Հայկական խնդրին մէկ ամբողջական պատկերացումը պիտի ներկայացնէ Վարչութիւնը: Ռօտոսթոյի անցուղարձեւումն մէջ պարագայ մը ուշադրութիւնս գրաւեց. ես Ասլանեան վրդ. րազապէր եկեղեցական մը ճանչցած եմ, որպէս զի միանգամ ընդ միշտ իմ դիրքս ճշտեմ այդ եկեղեցականին հանդէպ, Վարչութիւնը պէտք է որոշ տեղեկութիւններ տայ անոր մասին կամ գոնէ ըսէ թէ իր մասին ըսուածները թիւրի մացութենէ առաջ եկած են:

Ե. ՇԻՐԻՆԵԱՆ ԷՅԻ. — Վարչութիւնը նահատակներուն ցուցակը պէտք է պատրաստէ և ներկայացնէ կառավարութեան. որովհետեւ երբ մենք գիտենք որ հարկւրէ աւելի են սպաննուածները, կառավարութիւնը հինգ-վեց հոգիի խօսք կ'ընէ: Ասլանեան վրդ. րազապէր պաշտօնատեղին երթալ ուզեր է, բայց անիկա կառավարութեան վստահութիւնը չվայելեր, ու Ռօտոսթօ չկրնար վերադառնալ:

Ս. ԳՍՐԱՆԵԱՆ ԷՅԻ. — Ասլանեան վրդ. ըսաւ թէ ամէնէն աւելի Մալկարայէն կը վախնայ, որովհետեւ անիկա անցեալ մը ունի. անգամ մը յարձակում եղած է Մալկարայի վրայ Կէլիպօլուէն եկած պաշտօն-պօզուքներու կողմէ, Հայերը ինքզինքնին պաշտպաներ են և Պուլկարները օգնութեան հասած են: Մալկարայի մէջ Պուլկարները թուրքի տուն մը անգամ չեն ձգած, հոնտեղի ժողովուրդը անհամեմատ աւելի վտանգի ենթակայ է քան թէ Ռօտոսթոյին: Առաջնորդին նկատմամբ այլևայլ մարդիկ զանազան կարծիքներ կրնան յայտնել. բայց ի՞նչու ժողովը երբ հարցուց իրեն և տեղեկութիւն ստացաւ և իր Սօֆիա երթալու պատճառներուն իրազեկ եղաւ, տեսաւ որ բարդ է խնդիրը և այն ատենն էր որ պահանջեցինք որպէս զի գրաւոր տայ իր

յայտարարութիւնը, որովհետեւ եթէ առանց որոշ ապացոյցներու կառավարութեան դիմում ընէինք, տարակոյս չկայ որ հերքումի պիտի բաղխէինք. ինչպէս յաճախ կը պատահի: Ինքը վարանցեալ գրաւոր բան մը տալու, բայց հարկ տեսանք դիմում ընելու համար այդպիսի բան մը ի ձեռին ունենալ, նոյն իսկ եթէ ստորագրուած չըլլար: Ամէն պարագայի մէջ ժամը ժամուն վտանգ մը չկար և Վարչութիւնս չկարծեք որ մարդկօրէն թերութիւն մը գործած ըլլայ:

Տ. ՀՄ. ԱՐԲԵՊ. Ցաւ մըն ալ աւելցաւ հայ ազգին արդէն արիւնքի սրտին վրայ: Կիլիկիոյ ջարդը ապրիլ 1ին սկսաւ, 5ին լուր Կիլիկիոյ ջարդը ապրիլ 1ին սկսաւ, 5ին լուր եկաւ, կը վախնամ որ նոյն իսկ այս ժամուս դէպքեր կը պատահին, որոնք մենք ով գիտէ թէ երբ պիտի իմանանք. բայց կառավարութիւնը ժամը ժամին տեղեկութիւն ունի: Սոյսօր Ռօտոսթոյին եղած է, վաղը Մալկարային, Հայրապօլուին և նոյն իսկ Էտիրէէին րային, Հայրապօլուին և նոյն իսկ Էտիրէէին ալ կրնայ ըլլալ: Շիտակը ես քիչ մը անբաւական կը գտնեմ Վարչութեան գործունէութիւնը, աշխատութիւն միանգամայն կարեւոր է: Ես թաջանութիւն միանգամայն կարեւոր է: Ես կան ձայնը բարձրացնէ և խիզախ դիմում մը ընէ. վաղուէն սկսեալ պէտք է դիմենք Սուլթանին և յիշեցնենք Ն. Վեհափառութեան այն խօսքը զոր ըսաւ Կիլիկիոյ եղեւնին առաջ իրեն ներկայացած ատենին, այսինքն թէ ասկէ հոգ ոչ մէկ Հայու քիթ պիտի չաւրիւնի, պէտք է խառն պատգամաւորութիւն մը յիշատակագիր մը ներկայացնէ նաեւ դեսպաններուն: Դարձեալ կը կրկնեմ թէ Մալկարայի վիճակը վտանգաւոր է:

Տ. ՎԱՀՐԱՄ ԱՐԲ. — Կը համակերպիմ եզրօրս առաջարկին, շատ բաներ կը մտածեմ, բայց կը վախնամ որ մեզի օգտուէտ ըլլալու տեղ վնասակար կ'ըլլայ, հետեւաբար պէտք է եղելութիւնները իրենց քանակութիւններով Պատրիարք Սրբազանին կողմէ ներկայացուին կառավարութեան և Ս. Պատրիարքը նախկին պատրիարքներով պարբերաբար դիմումներ ընէ ներքին գործոց նախարարութեան և իրաց վիճակին դէմ իր բողոքները

ներկայացնէ. նոյն իսկ ուրբաթ օր մը եկեղեցականութիւնը կրնար դիմել թագաւորին. ասկէ զատ կարելի է գործել նաեւ օտար միջոցներով, սակայն այնպիսի խոհական ձեւերով որ գործը չվտանգէ:

Դ. ՉՕՀՐԱՊ ԷՅԻ — Ռօտոսթոյի վրայ տարածուած սարսափը ծանր է անշուշտ, սակայն այս առիթով եղած առաջարկներն ու քննադատութիւններն ալ անտեղի և կանխաքննադատութիւններն ալ անտեղի և կանխադատ և ուրիշ նպատակ չունին եթէ ոչ ազգին գլուխը գտնուող մարմինները վարկաբեկ ընելու: Ըսուեցաւ որ դիմումներ կատարուին, ընդլայնուին, իմ ընկերակիցներուս ըսածներուն մէջ շատ բանաւոր նպատակ մը կայ, և քանի որ դէպքերուն հրատարակութեան մասին պաշտօնական արգելք մը գոյութիւն ունի, պահանջենք կառավարութենէն որ վերցուի այդ արգելքը: Ի՞նչ առաջ նէն որ վերցուի այդ արգելքը, որովհետեւ մենք անտեղի ըսի, կը կրկնեմ, որովհետեւ մենք այսօր յախուռն կերպով արտայայտուելու, որոշ դիմում մը ընելու համար լուսաբանուած չենք. դեռ այս վայրկեանիս երբ արդէն մէկ քանի օր անցած է դէպքին վրադէն, պատր. փոխանորդը մեզի կը ծանուցանէ թէ ստուգապէս 15է աւելի անձեր շատ հաւանականաբար վերիվերոյ քննութեան արդիւնք է: Ես մտիկ ըրի տեղեկագիրը տարբեր եզրակացութիւն մը չկրցայ հանել: Եթէ այս պայմաններուն մէջ դիմենք, կրնայ եթէ որ դէպքերու նուազութիւնը մեր ըլլալ որ դէպքերու նուազեցնէ. հետեւագանգատներուն կշիռը պակսեցնէ. հետեւաբար համամիտ ըլլալով հանդերձ որ դէպքերու մամուլին մէջ հրատարակուելու մասին դիմում կատարուի, ես այս կարծիքը ունիմ որ այս ժողովը երկու երեք օր եւս պէտք է սպասէ եւ յետոյ միայն պէտք եղածը ընէ. միայն թէ առ այժմ իր ցատումը պէտք է հանդիսաւորապէս ներկայացնէ. ամէն պարագայի մէջ բանաւոր է սպասել քննութեան ելքին:

Դ. ՏԷՐ ՄՈՎՍԷՍԵԱՆ ԷՅԻ. — Ձօնապէս այնպէս ներկայացուց թէ Վարչութիւնը իրեն ինկած պարտականութիւնը կատարած է, բայց արուած բացատրութիւնները կատարել

լսպէս հակառակը հաստատեցին: Այս խնդրոյն վրայ զանազան բացատրութիւններ տրուեցան, բայց խնդրին բուն գոյնը երեւան չգործեցաւ. ինչպէս կը հասկցուի անցողակի տրուած տեղեկութիւններէ: Բրօքսօզ մը ստորագրուել է. որուն մէջ Հայոց ազատութեան մասին ալ պայման դրուել է. ինչպէս կ'երեւայ ասոնցմէ առաջ եկած մտայնութիւններ աննպաստ հետեւանքներ առաջ բերեն: Եթէ վարչութիւնը Ասլանեան վրդ. փառած տեղեկութեանց պէտք եղած կարելիութիւնը տուած ըլլար, հարկ էր օրուան կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրել: Այսու հանդերձ այս ստիժով ալ հարկ կը համարեմ կրկնել, ինչպէս ուրիշ ատեն ալ ըսած եմ որ՝ կառավարութեան դէմ բռնուելիք ու է անհաշտ ընթացք մեզի համար չու հաւոր չէ: Դարձեալ առաջարկներ եղան հոս որ ցանկեր հրատարակուին, ևն. Պէտք է գիտնալ թէ ասոնք մեր շահերուն ու է համապատասխան արդիւնք պիտի տան: Եւ վարչութեան առաջ բացատրութիւններէն առնելով կառավարութեան եկայ թէ՛ ինք գիտէ իր ձեռք առնելիք ընթացքը այս խնդրոյն մէջ, իսկ եթէ պէտք ունի, մենք կրնանք ճշգրիտ գիտնալ: վարչութիւնը իր կատարած դիմումին մէկ երկու օր յապաղման համար բացատրութիւն տուաւ թէ տեղեկութիւնները բերանացի կերպով հաղորդուած ըլլալով կառավարութեան չենք կրնար բերանացի ներկայացնել, ասիկա կ'ընդունիմ, սակայն ամէն անգամ պատահած ու է գէպքի մասին այս կերպով վարժիլ շատ կարելի չեմ տեսներ, բնականաբար իրողութիւններու և «տօքիման»ներու վրայ հիմնուած դիմումը ուրիշ կերպ կ'ըլլայ, եւ թաղութիւններու վրայ եղածը ուրիշ կերպ: Եւ առաջարկուած կարգ մը միջոցներուն մէջ ու է օգտակարութիւն չեմ տեսներ և անժամանակ կը նկատեմ, պէտք է խորհիւնք ընդհանուր քաղաքականութեան մը վրայ որուն պէտք է միտին մեր բոլոր միտքերը և յանգին մեր բոլոր խորհուրդները: Եւ այսպիսի խնդրանքներուն մէջ օտար պետութիւններու դիմելն ալ մեծ օգուտ մը չեմ սպասեր, որովհետեւ անոնք գիտնալով ամէն բան, ոչ մէկ միջոց կը գործադրեն:

Ա. ՀԱՆՈՒՆԵԱՆ ԷՖ. — Չօրհան էֆ. յայտարարութեան համաժողովում. որոշ թիւերու վրայ հիմնուելով կառավարութեան դիմումը ներքին մասին, ապա թէ ոչ հրատարակութիւններ ընկելով և յանցաւորները պատժելու մասին կառավարութեան դիմումով այն արդիւնքը առաջ կրնայ գալ, ինչ որ եկաւ մասնակի ձեռքով-Պէրէքէթի ծանօթ կառավարչին առիթով որ ի վերջոյ ազատ արձակուեցաւ: Ամէն պարագայի մէջ Պատրիարքարանը պէտք է պահանջէ կառավարութիւնէն որ իր ներկայացուցիչն ալ գտնուի պետական քննիչ յանձնաժողովին մէջ:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ. — Ազգ. ազգանքութեան մասին երբ խօսք կ'ըլլայ այս ժողովին մէջ, ընդհանուր կերպով առաջարկութիւններ կ'ըլլան ազգանքը վերցնելու համար և եղբայրացութիւններ կը հանուին, սակայն պէտք է ըսել թէ անոնք միշտ նպատակին չեն ծառայեր, այսօր մեր ամէնուն յուզման պատճառով խնդիրը Ռօտոթոյի դէպքն է. այս խնդիրը երկու մասի կը բաժնուի. մենք պէտք է քննենք նախ թէ վարչութիւնը այս խնդրոյն մէջ իր պարտականութիւնը կատարե՞ր է թէ ոչ. և երկրորդ խորհիւնք թէ ինչ ուղղութեան պիտի նետուինք: Ասոր համար պէտք է սպասենք քննութեան ելքին: Կառավարութեան յայտարարութիւնը և Պատր. Փոխանորդին մեզ զրկած տեղեկագիրը իրողութեան վրայ չեն համաձայնիր. պաշտօնական յայտարարութիւնը կ'ըսէ. «Երբ որ բաժնակրներ պիտի մանէր, քանի մը Հայեր գնդակ արձակել են իր վրայ և ասկէ առաջ եկած են պատահած սպանութիւնները»: Պատր. Փոխանորդը իր տեղեկագիրին մէջ այս մասին ոչ մի բան չէ ըսած, այլ այդ նամակի բովանդակութիւնն է «տեղացի նախկին միւլթիլին շտրպաւորութեան գաղցին և լաւ տղաւորութեամբ մեկնեցանք, իսկ ամբողջ կատարեց կոտորածը» այս պատմութեան մէջ ոչ ոստիկանի խնդիր կայ և ոչ ուրիշ բաներ, ատենք բոլորը դատարկ խօսքեր են. զոհերու թիւի մասին ալ ու է տեղեկութիւն չկայ. կ'առաջարկուի որ անոնց թիւը ճշգրտել, բայց այդ ճշտումով խնդրին էութիւնը չի փոխուիր: վարչութիւնը պէտք է դիմէ կա-

ռավարութեան և լսէ թէ իր յայտարարութեանց հիմը սխալ է, և արդէն կառավարութիւնը իր տեղեկան պաշտօնականներէն առաջ լուրերն է որ կը հրատարակէ, ինչպէս վերջերս ռուսական սահմանէն անցնող ճաթ-բորգներու վրայ գործուած խփուկութիւններու առթիւ, տեղական գեկուցումներու վրայ յայտարարեց թէ՛ սահմանագիծէն փախստականներ են սպաննուածները, որոնք անաստելով պահանջներ հրամանին. փախած են, Մեր պահանջը պէտք է ըլլայ այժմ, այն թէ — ինչպէս Ատանայի դէպքի միջոցին եղաւ, — կառավարութիւնը պաշտօնական յայտարարութեամբ ծանուցանէ որ Ռօտոթոյի անցքերուն մէջ Հայերը կապակցուել չեն: Իսկ իմ առաջարկելիքներս այս սահմանէն դուրս են և ես այս ժողովին մէջ չեմ գտներ անոնց դարմանը:

Վ. ԹԵՔԵՆԵԱՆ ԷՖ. — Փափաքելի է որ մեր խորհրդակցութիւնները եզրակացութեան մը յանգին, ես բանաձեւ ներկայացնելու մարման չեմ բռնուած. բայց կը փափաքեմ որ մեր խորհրդակցութիւնը երբ բանաձեւով մը վերջ գտնեն:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ. — Պէտք է պահանջենք որ կառավարութիւնը ինք սրբագրէ իր սխալը և պատասխանատուները խստիւ պատժուին:

Մ. ԿԻՐԻՃԵԱՆ ԷՖ. — Փափաքելի է որ այս սրբագրութիւնը կատարէ կառավարութիւնը, որովհետեւ եղած յայտարարութեան մէջ հայ զինուորներու մասին եղած վերագրումը՝ վտանգի կը դնէ հայ զինուորի կեանքը:

Ս. ԳԱՐԱԵԱՆ ԷՖ. — Կառավարութիւնը կ'ըսէ թէ պուլիար սուժանակեայ կառավարութեան մէջ ծառայող Հայեր. Յոյներ կան իւր 20—30 հոգի, որոնցմէ վեցը հայ են եղբ. և անոնց կը վերագրէ պատահած դէպքը:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ ԷՖ. — Յաւանքով է որ Ռօտոթոյի դէպքի միջոցին գերի զինուորներ ալ ջարդուել են ու երբ բանակը մտեր է այն-

տեղ՝ գերի զինուորներն ալ սրէ անցուցել է փոխանակ այդ գերի ինկաժներուն լաւ ընդունելութիւն ընելու. ասիկա զարհուրելի տպաւորութիւն կ'ընէ:

Ս. ԳԱՐԱԵԱՆ ԷՖ. — Կը պահանջէք որ փոխանորդին տեղեկագրութիւնները հրատարակութեան տանք, սակայն այս կէտին վրայ պէտք է խորհիւնք, արդեօք այս կերպով փոխանորդին դիրքը պիտի չվտանգուի:

Ա. ՀԱՆՈՒՆԵԱՆ ԷՖ. — Ս. կէտը չմոռցուի լնաւ որ քննիչ յանձնաժողովին մէջ Հայերն ալ ունենան իրենց մասնակցութիւնը, որպէս զի պատիժները որոշելու գործը արդարութեամբ տեղի ունենայ:

ԱՏՆԱՊԵՏ ԷՖ. — Վիճարանութեանց իրեն եզրակացութիւն՝ հետեւեալ բանաձեւը ձեր ուշադրութեան կը յանձնեմ:

(Ատենադպիր էֆ. կարգաց հետեւեալ բանաձեւը).

Ազգ. ժողովը խորին յուզումով լսեց

Ռօտոթոյի և չրվակայից հայութեան գլխուն պայթած նոր սարսափը: Այս մասին վարչութեան մինչեւ այսօր կատարած գործունէութեան տեղեկատուութիւնը լսելէ ետք որոշեց:

Ա.) Իր ամենախոր կեկծը և ցաւակցութիւնները յայտնել Ռօտոթոյի և չրվակայից ազգեալ հայ ժողովուրդին:

Բ.) Ամէն միջոց գործածել պատահած աղէտը աւելի եւս չտարածելու համար:

Գ.) Պահանջել կառավարութեան որպէս զի աղէտին բոլոր պատասխանատուները ենթարկէ ամենախիստ պատիժներու:

Դ.) Ստացուած վաւերական տեղեկութեանց համեմատ այժմէն իսկ յայտնի է որ դժբաղդաբար զոհերուն թիւը ցարդ պաշտօնապէս ցոյց տրուածէն շատ աւելի և հայ մասունքներ հրատարակած թիւին շատ մօտ է. թէ այս կէտը վերջնապէս ստուգելու և թէ միան-

գաւառն աղէտին հանգամանքը երեւան հա-
նդու համար ամէն ազգային միջոցներով և
ստիպողաբար կատարել մանրակրկիտ քննու-
թիւն մը:

Ե.) Այս նպատակով կառավարութեան
կողմէ ևս կատարուելիք քննութեանց մասին
գիտութիւններ ընել և խնդրել որ այդ պաշտո-
նով կալմուկիք յանձնաժողովին մէջ լեզգ.
Պատրիարքարանը ներկայացուցի: մը ունի
նայ:

Զ.) Վարչութեան ստացած ստոյգ տեղ-
կութիւններու հիման վրայ պատրաստուելիք
մանրամասն տեղեկագիրը հրապարակել՝ լու-
սաւորելու համար ընդհանուր հանրային կար-
ծիքը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Համամիտ էք այս
բանաձեւին:

ԶԱՅՆԵՐ. — Այո՛, այո՛:

(Ժողովը այս միջոցին տասը վայրկեան
դադար ըրաւ:)

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ պիտի անցնինք
օրակարգի բուն խնդրոյն, այսինքն Հայաս-
տանի հարստահարութեանց առթիւ վարչու-
թեան տալիք բացատրութիւններուն. հետե-
ւաբար կը հրաւիրեմ վարչութեան ատենա-
պետը որ խօսի այս մասին:

Ս. ԳԱՐԱՆԱՆ ԷՖ. — Հիմա Պատկ. Ժո-
ղովիդ առջեւ բացատրութիւն տալու կը կոչ-
ուինք օրուան յարաբերական կարեւոր խն-
դիրներուն վրայ: Վարչութիւնս իր պարտա-
կանութեան գիտակցութիւնը ունի և պար-
տաւոր է միշտ ուղղուած ատեն բացատրու-
թիւն տալու, սակայն գոհ պիտի մնանք եթէ
այդ բացատրութիւնները այսօր չպահանջուին
մենք, որովհետեւ խնդիրը այնպիսի վիճակի
մէջ կը գտնուի որ չատ փափուկ հանգամանք
մը ունի: Այսու հանդերձ մինչև աստիճան մը

գաղափար մը տալու համար կրնանք մեր
հիմնական ուղղութեան մասին մէկ քանի
խօսք ըսել: Ռօտոսթոյի դէպքին առթիւ ա-
ռիթ ունեցանք վերստին կրկնելու թէ հայ
ազգը ինքնավարական և անջատողական զգա-
ցունման չի տաճեր ընաւ և մեր նպատակն է
Օսմ. կառավարութեան վստահելով մեծ կո-
րովով և ուժով ապահովութիւն և հաւասա-
րութիւն պահանջել. եթէ կծկտուր բա-
ներ ըսէինք, ձեզ խարած պիտի ըլլայինք,
այս խնդրոյն վրայ խօսիլը օգտակար չենք
գտնել, մինչև իսկ մնասակար ալ...:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ ԷՖ. — Ընդհ. ժողովին կող-
մէ ընտրուած հարստահարական Յանձնաժո-
ղով մը ունինք, փափաքելի էր գիտնալ թէ
անիկա համամիտ է ձեր այս յայտարարու-
թեան և ինք ինչ կը խորհի տրուելիք այս
բացատրութեանց մասին:

Ս. ԳԱՐԱՆԱՆ ԷՖ. — Հարստահարական
Յանձնաժողովը շարունակչական մէջ է վար-
չութեան Ապահովութեան Յանձնաժողովին
հետ և իր կազմութիւնն ու գործակցութիւնը
մեծապէս օգտակար եղած է. կը յուսամ թէ
իրենք ալ համամիտ են մեր այս յայտարա-
րութեան և երբէք ունէ պարագայի մէջ կար-
ծեաց անհամաձայնութիւն առաջ չէ եկած:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ ԷՖ. — Փափաքելի է ուրեմն
որ Յանձնաժողովին անդամներէն մէկն ալ
խօսի այս խնդրոյն վրայ:

Գ. ԶՕՂՐԱՊ ԷՖ. — Իմ ընկերներուս հետ
չեմ խորհրդակցած, ժողովոյ մէջ ունէ յայտա-
րարութիւն ընելու համար, սակայն կարծեմ
զիս չպիտի հերքեն ընկերներս, երբ ըսեմ թէ
Յանձնաժողովը իր հսկողութեան պարտակա-
նութիւնը կը կատարէ պէտք եղած կերպով:
Ես չափազանց կը գտնեմ եղած վրդովում-
ները. առաջադրուած գործը իր յատուկ ճամ-
բով կը յառաջանայ և անհրաժեշտ եղող կար-
գադրութիւնները կ'ըլլան, մէկ խօսքով ձեր
Յանձնաժողովը իր հսկողութեան պարտքը կը
կատարէ: Ես պարտականութիւն կը համարեմ
զիտել տալու որ այս մասին երբեմն երբեմն

ուղղուած բացատրութիւնները օգուտ չեն
կրնար տալ: մամիտ է, թէ՛ խնդիրը և թէ ատենը կը
փակենք:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ ԷՖ. — Կ'առաջարկեմ բա-
ւական համարել տրուած բացատրութիւնը և
խնդիրը փակել:

ԶԱՅՆԵՐ. — Այո՛, այո՛:

(Ատենը փակուեցաւ ժամը 6.30ին):

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եթէ ժողովը ալ հա-



(Գ. Վիճակ)

Գում-գաբու, Գում-գաբուի դուրս

69. Դալիթ էֆ. Տէր-Մովսէսեան
70. Համբարձում էֆ. Պոյանեան
71. Սարգիս » Սուխ
72.

Կէսիկ-փառա

73. Հմայեակ էֆ. Արամանց
74. Յարութիւն » ճանկիւկեան
75. Յակոբ » Սեփիւսեան
76. Յակոբ » Նշանեան
77. Ներսէս » Զաքարեան

Սամաթիա Ս. Գեորգ

78. Գրիգոր էֆ. Զօհրապ
79. Լեւոն » Սաաթեան
80. Հայկ » Խօնասարեան
81. Պարգեւ » Փափագեան
82. Լեւոն » Սեղբոսեան
83. Ռուբէն » Փափագեան
84.

(Ե. Վիճակ)

Գուգլուցնուկ — Ինասիէ

85. Երուանդ էֆ. Խորասան
86. Լեւոն » Տէմիճիպաշեան
87. Ռուբէն » Զարդարեան
88. Ռսկան » Մարտիկ ան
89. Կոպեռնիկ » Խաչատուրեան

Թօփ-գաբու

90. Դալաթիա-Պէլֆոգ էֆ. Օտեան
91. Երուանդ էֆ. Նաուր-գաբու
92. Նշան էֆ. Գալապեան
93. Տիգրան » Մանուէլեան

Սամաթիա Ալթըմէր

94

Սկիւսար Ս. Խաչ

95. Բարսեղ էֆ. Աւետիսեան
96. Գարեգին » Տէմիճիպաշեան
97. Յարութիւն » Շահրիկեան
98. Վարդգէս » Սէրէնկիւկեան
99. Յակոբ » Մինասեան

Իւմէլի-նիսար. Պոյանը-գիւղ. Եւնի-գիւղ

- 100 Արարամ էֆ. Տէր-Յակոբեան

ԳԱՐԱՆԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՆԱՆԷՐ

(Ա. Վիճակ)

101. Վահան Եգիպոս էֆ. Թէրէեան
102. Յակոբ Եղոկիա էֆ. Պօնճուգեան
103. Տօթ. Փաշեան էֆ. Խարբերդ
104. Սողոմոն Լ. Կարին էֆ. Տէր-Ազարեան
105 Կիրին — Մանգրիբ

Մու. Ե

106. Գեղամ էֆ. Տէր Կարապետեան
2մէկաձագ — Զարսանցագ

107.

Տապիզոն

108. Օննիկ էֆ. Զիֆթէ-Սարաֆ

(Բ. Վիճակ)

Աղբամար

109.

Բալու

110. Մելրոն էֆ. Կիւրճեան

Եօզլատ

111. Աւետիս էֆ. Ճինկիլիգեան

Կեսարիա

112. Վահան էֆ. Էսսեան

Հալէպ — Այնթապ

113. Սարգիս էֆ. Գնահեան

Նիկսմիդիա

114. Տօթ. Գրիգոր էֆ. Ճէլալ

Պաղսաս

115. Տօթ. Ներսէս էֆ. Թիւլեան

Սղերդ

116. Սերովբէ էֆ. Նորատունկեան

(Գ. Վիճակ)

Ակն

117. Ասովմ էֆ. Երեցեան

Արաբկիր

118. Արթարի էֆ. Սարաֆեան

Եղեւսիա

119. Սեպուհ էֆ. Խիթիսեան

Զմիւռնիա

120. Լեւոն էֆ. Տնտեսեան

Հանրն

121. Տէվլէթ էֆ. Տատրեան

Մալաթիա

- 122.

Պանքրուս — Պալքէսի

123. Տիրան էֆ. Երկանեան

Վան

- 124.

(Դ. Վիճակ)

Ադրիանապոլիս

125. Օննիկ էֆ. Տէրունեան

Աստու

126. Արիստակէս էֆ. Գասպարեան

Բաղէ

127. Աղէքսանդր էֆ. Փանոսեան

Կուսիմ — Աթիօն-Գարա. Հիսար

128. Զարեհ էֆ. Խօրասանեան

129. Գասպար	Պրուսա էֆ. Նեմցե Prosoybo	Գաղասիա	185. Տր. Խաչիկ	էֆ. Պողոսեան
130.		Կոնեա	186. Բարթող	էֆ. Զօրեան
131. Տիգրան	Տիգրանակերտ էֆ. Նազաշեան	Երզնկա	187. Գարրիէլ	էֆ. Նորատունկեան
132. Գէորգ	Տիվրիկ էֆ. Մեծատուրեան (Ե. Վիենակ)	Մարտիկ - Ջէյրուն	188. Սմբատ	էֆ. Բիւրատ
	Ամասիա - Մարգարուն	Շապին-Գաբանիսար	189. Ժագ	էֆ. Սայապալեան
133. Տիգրան	էֆ. Մարտիկեան Բաբեղ	Սեբասիա	140. Տօրթ. Նազարէթ	էֆ. Տաղաւարեան
134. Երուանդ	էֆ. Սրմաբէշիանլըեան			

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

Ա. Ատենապետ	Գարրիէլ էֆ. Նորատունկեան	Ա. Ատենաղալիր	Հմայեակ էֆ. Արամեանց
Բ. »	Տր. Տաղաւարեան էֆ.	Բ. »	Երուանդ էֆ. Պէյազմեան
Գ. »	Յակոբ էֆ. Պոյաճեան	Գ. »	Աղերսանդր էֆ. Փանոսեան

Ն Ա Խ Ա Ք Ն Ն Ի Զ Դ Ի Ի Ա Ն Ք

ԶԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Տ. Հմայեակ Արքեպ. Դիմարսեան
Բ. Արամ էֆ. Հալաճեան
Գ. Արշակ էֆ. Սլաւոյաճեան

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Յակոբ էֆ. Պոյաճեան
Բ. Լեւոն էֆ. Սեղրոսեան
Գ. Հրանտ էֆ. Անատուր

ԿԱԼՈՒԱԾՈՑ ԴԻԻԱՆ

Ա. Պենոն էֆ. Տէյիրմէնճեան
Բ. Վահան Էսայեան
Գ. Թորգոմ Պոյաճեան

ՀԱՄԱՐԱԿՍԼՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Եղուարդ էֆ. Շիրինեան
Բ. Խաչիկ Սրվաճեան
Գ. Պարգեւ էֆ. Փափաղեան

ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Յարութիւն էֆ. Մոստիշեան
Բ. Բարսեղ էֆ. Աւետիսեան
Գ. Նշան էֆ. Գալըպճեան

ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Տ. Մաղարիա Աքիպ. Օրմանեան
Բ. Գարեգին էֆ. Տէմիրճիպաշեան
Գ. Մելրոն էֆ. Կիւրճեան

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Դաւիթ էֆ. Տէր-Մովսէսեան
Բ. Գէորգ էֆ. Մեծատուրեան
Գ. Հայկ էֆ. Խօճասարեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Բարթող էֆ. Զօրեան
Բ. Վահան էֆ. Թէքէեան
Գ. Ռուբէն էֆ. Զարդարեան

ԵԼՆԵՄՏԻՑ ՅԱՆՋՆԱԽՈՒՄԲ

ԳԻՆ 1 ՂՐՈՒՄ

Սեփականութիւն " զգ. Սնտուկին, Ա.զգ. Ժողովոյ ծախուց յաւկայցեալ
Կը ծախուի յ'Ա.զգ. Խորհրդարան Ղալաթիոյ